

ՍԱՊԻՀԱ ԿԵՕՔԶԵՆ ՕՂԱԿԱՅԱՆ ԻՍԹԱՄՊՈՒԼ, 2012 Թ.

Posted on March 17, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս 9 Փետրվար 2021

Երկու խօսք.- Այս ակնարկի նախնական օրինակը դիտաւորեալ կերպով հաներ էի 2012-ին լոյս տեսած «Մորմոքող անցեալի արահետներով» գիրքիս մէջէն լոկ մէկ վերապահութեամբ՝ չըլլա՛յ թէ այս փորձառութեան նկարագրութիւնը դպնայ մեր՝ հայութեան արժանապատուութեան՝ որքան ալ պատահածը ըլլար սրտաճմլիկ եւ իրական եւ գլխաւոր կերպարը զոհ մը՝ Հայաստանի յետ-անկախութեան շրջանի ընկերային-քաղաքական և ռազմական ահաւոր կացութեան: Այսօր վիճակը շատ տարբեր չէ. կը շարունակուի ընկերային կեանքի քայքայումը, իսկ յուսալքութիւնը ոմանց կ'առաջնորդէ հայրենալքութեան, մինչեւ իսկ ինքնասպանութեան փորձերու: Երկար մտածեցի, ապա վերատեսութենէ եւ տարբեր ընկերներու կարծիքները առնելէ ետք միայն որոշեցի հրատարակել: Բնաւ երբեք միտք չունիմ այս օրերուն կրկին թափ առած արտագաղթի երեւոյթի **ամբողջ մեղքը** փաթթել այսօրուան գլուխը կորսնցուցած իշխանութեան եւ իր ղեկավարին վրայ: Վերջին քսանհինգ տարիներու մեր յաջորդական վարչակարգերը «մեծ ծառայութիւն» մատուցին արտագաղթի խորացման: Միւս կողմէ կ'ուզեմ նաև մեր աշխատաւոր, մտաւորական եւ մասնագիտութեանց տիրացած հայրենակիցներուն ուշադրութեան յանձնել գլխաւոր կերպարիս փորձառութիւնը:

**«...Եղան հայեր, որոնք իրենց մորթը փրկելու համար...լքեցին տուն, տեղ, երկինք...»,
Շահան Շահնուր, «Նահանջը առանց երգի»
«Ով որ ականջ ունի թող լսէ, ով որ աչք ունի թող տեսնէ»: «Աստուածաշունչ»**

Նուաստութեան, վիրաւորուածութեան ու ափսոսանքի պահեր շատ եմ ունեցեր, ոմանք թաղուեր են յիշողութեանս անյատակ հորին մէջ, ուրիշներ ժամանակի ընթացքին աղաւաղուեր են, կան նաեւ քանի մը դէպքեր, որոնք ամէն անգամ երբ կը բարձրանան սրտիս խորքերէն ու կը հասնին սա ճաթելիք ուղեղիս, դող մը կ'ապրիմ եւ ճիգ մը կ'ընեմ պատահական բանով մը զբաղելու, որպէսզի անթեղեմ զանոնք ու շարունակեմ առօրեա:

2012, Յուլիս ամիս, Իսթամպուլի ասիական կողմի «Սապիհա Կեօրջէն» օդակայանի սպասման սրահ: Խուճիք մը ուխտաւորներ զբօսաշրջիկի հանգամանքով, ԱՄՆ-էն ու Գանատայէն շրջագայութեան ելած ենք Պատմական Հայաստան եւ Կիլիկիա: Բոլորիս միտքերն ու հոգիները միացնողը մեր հողի կանչն է, կանչ մը, որ մեզի փոխանցուած էր մեր տարաբախտ ծնողներէն ու մեծ ծնողներէն, Միջին Արեւելքի մեր համեստ նախակրթարան եւ երկրորդական վարժարաններէն, ակումբներէն...

Տիկ. Սապիհա Կեօրջէն, օդաչո՛ւ Սապիհա, Թուրքական հանրապետութեան առաջին կին եւ հերոսուհի օդաչուն, հանրապետութեան հիմնադիր, «նախագահաց նախագահ» Աթաթիւրքի որդեգիրներէն մէկը, որ երիտասարդ տարիքին իր կոչումը նկատեց երկինքը պեղելու եւ դէպի աստղերը թռչելու ճգնումը: Եւ յաջողեցաւ՝ կատարելով

բազում քաղաքացիական և ռազմական թռիչքներ արեւելեան Թուրքիոյ մէջ (Արեւմտեան Հայաստան) ապստամբութիւն բարձրացուցած քիւրտ եւ այլ ցեղերու դէմ: Ջարդեց, քանդեց եւ արժանացաւ...Թուրքիոյ Հանրապետութեան հերոսի կոչումին:

Այդ օրը, Յուլիսի 27-ին մենք՝ խումբ մը հայեր, քաջ գիտէինք թէ ով էր Սապիհան: Ան հայ որբուհի մըն էր, որուն ծնողները «անհետացած էին», իսկ հարազատներէն ոմանք ցեղասպանութեան ճամբաներով հասեր էին Պէյրութ: Յետագային, գրեթէ թրքացած Սապիհան, հանդիպեր էր իր հարազատներուն, բայց չենք գիտեր թէ ինչպիսի՛ զգացական պահ մը եղած էր այդ: Այս մասին ոչինչ գիտենք. Պատմութիւնը պահած է սակայն անոնց անունները...

Թրքացեր էր հայուհին, որուն նկարին եթէ նայիս, թուրքի ոչ մէկ հետք կը տեսնես: Իսկական հայուհի մը, որ թուրք ամուսին մը ունեցեր էր եւ թուրք զաւակներ...

Քանի՛ հազար այսպիսի հայուհիներ այսօրուան թուրք ազգին տուին հերոսներ, գործիչներ, տնտեսագէտներ, գիտնորականներ, գիտնականներ, որոնք հաւանաբար չիմացան նոյնիսկ թէ իրենց երակներուն մէջէն կը հոսի հայու արիւն, այն հայերու, որոնց ազգակիցները ջարդուեցան «Երանի՛ թուրք եմ ըսողին» երդումով սևած թուրքերու կողմէ...

Այսպէս կը խորհրդածէինք կես գիշերային խաղաղ օդակայանին մէջ ու կ'ափսոսայինք, կը մղկտայինք ու հարց կու տայինք մենք մեզի՝ հիմա մենք «սեփակա՞ն» յարկի տակ կը գտնուինք թէ՞ մեր ջարդարարի որդեգիր դստեր: Մեզի կը մնար լռել: Խօսելիք բան չունէինք: Ի՛նչ իմանայինք որ գալիք օրերուն որքա՛ն այսպիսի պատմութիւններ պիտի լսէինք եւ որքա՛ն մարդոց պիտի հանդիպէինք, որոնք խաչակնքելով մեզի պիտի մօտենային ու փսփսուքով յայտնէին.

- Իմ մայրս ալ հայ էր:

- Իմ մեծ մայրս ալ հայ էր, անունը Ռվսան, Սառա, Խաթուն...

- Չէ՞ք հաւատար, ահա՛. «Հայր մեր, որ յերկինս ես...», *մեզ մայրիկէս լսեր իմ* (մեծ մայրիկէս լսեր եմ)...

Իսթամպուլ Անտիոք թռիչքը փախցուցած էինք մեզմէ անկախ պատճառներով, հետեւաբար մինչեւ առաւօտ պէտք է սլքտայինք «Սապիհայի յարկին տակ»:

Կ'ափսոսանք որ կես օր մը ի զուր պիտի կորսնցենք, որուն պատճառով ստիպուած պիտի ըլլանք ամբողջ ցերեկ մը Մուսա լեռան Վազֆ գիւղը անցընելու փոխարէն երեք-չորս ժամով բաւարարուիլ... Տաղտկալի են գրեթէ դատարկ սրահները, գրեթէ բոլոր ժամանցի կեդրոնները գոց են բացի մէկէն, ուր երկու թրքուհիներ կ'աշխատին յօրանջելով: Կը դիմենք աշխարհի օդակայաններուն մէջ սովորական երեւոյթ դարձած...նստարաններու վրայ կամ յատակին քնանալու միջոցին եւ ստեպ ստեպ լուացարան այցելելու:

Առտուան ժամը երկուրի մօտ էր, երբ նման պահանջք մը կ'ունենամ: «Ուրքս կոտորէր թատրոն չերթայի՛» պիտի ըսեր անմահ երգիծաբան Յ. Պարոնեանի Պաղտասար աղբարը:

«Գործի» աւարտին կը լուացուիմ ծուլօրէն եւ յանկարծ ականջիս կը հասնի արեւելահայերէն հեռախօսային պաղատագին խօսակցութիւն մը: «Հայաստանցի պետք է ըլլայ» կը մտածեմ եւ վստահ ըլլալու թէ յոգնութեան պատճառով տեսիլք չէ եղածը, կը մօտենամ ձայնի ուղղութեամբ: Քառասուններու մէջ գտնուող հաւաքարար կին մըն է բջջայինով խօսողը: Լուացարանի դուռի մուտքին, թիկունքը պատին տուած կը խօսի հարազատի մը հետ, որ ինքնութիւնը շուտով կը պարզուի որ Երեւանէն իր քսանամեայ որդին է: Կը համենամ, ներս ու դուրս կ'ընեմ եւ ականջալուր կ'ըլլամ ամբողջ ողբերգութեան մը, որուն նմաններուն հանդիպեցայ մի քանի անգամ Իսթամպուլի մէջ:

-Ա՛յ բալէս, լսի՛, լսի ինչ եմ ասում...լսի՛, մի՛ խօսա...մերդ ա խօսում...ինչի՞ ես շտապում տղայ ջան...լսի ի՞նչ եմ ասում...հա՛, հա՛, հասկանում եմ, բալէս, Եսքան սպասել ես մի քիչ էլ սպասի...Չէ՛, չէ...ի՞նչ ես ասում, ցա՛ւդ տանեմ, մատաղ ըլնեմ, մի քիչ փող եմ հաւաքել, առջեւում երկու շաբաթ արծակուրդ են խոստացել, կը գամ ու քեռուդ հետ կը գնանք կ'առնենք էդ «պիւմպէ» ես ասում, ինչ ես ասում...

Պաղ քրտինք մը կը պատէ գիս, յետոյ խեղդող տաքութիւն մը կոկորդէս վար գիս դուրս կը նետէ լուացարանէն եւ պարզապէս կը փլիմ ամենէն մօտիկ նստարանին վրայ՝ ամեն ճիգ թափելով չմատնել հայութիւնս:

Հեք կինը կը շարունակէ.

- Լսի՛ բալէս, տես ինչ եմ ասում...հա՛, հա՛, նշանի մատանին էլ կը բերեմ...ի՛նչ, ի՞նչ ես ասո՛ւմ,... հըմի պետք չէ՞, հապա ե՞րբ է պետք...ո՞նց կ'ըլնի...

Ու կը պարզուի այս ամբողջ խօսակցութենէն որ Երեւանի տղան չ'աշխատիր, յարմար գործ չի ճարեր, ծանօթ եթէ չունենայ աշխատանք չեն տար եւ նման սովորական պատճառաբանութիւններ:

Պահ մը փորձութիւնը կ'ունենամ բացայայտելու ինքզինքս եւ խնդրելու որ այստեղ հայերէն հասկցողներ կան, թող չիմանան իր պատմութիւնը եւ այս վիճակին մէջ գտնուիլը, որ ինք՝ հայուհի մը, Սապիհա Կյօքչեն օդակայանին մէջ կ'աշխատի որպէս ...

Ետ կը կենամ մտադրութենէս: Կինը կը շարունակէ համոզել որդին թէ այդ «ավտոն» (BMW) թանկանոց մեքենա է, գուցէ եւ «խփնուած ու տզած-փչած *ավտո* է, թէ անելի լաւ է Սուզուքի կամ Մազտա առնել...: Անօգուտ: Երեւանի մէջ պարապ-սարապ, մամայի ճակտի քրտինքով աշխատած գումարները գրպանը դրած «թասիպով» հայ երիտասարդը արժանապատուութի՛ւն ունի «աղբեր տղերքի» մօտ՝ «ստից-մտից» գործ չ'ուզեր աշխատիլ, այլ՝ սրճարանէ սրճարան պետք է երթայ, մէկ գարեջրատունէն միւսը,

մեկ փիծձայատունեն միւսը նետուի, *մարդպըրո ծիւե որ երեւայ թէ ի՛նչ շրջապատ ունի ինք:*

Ա՛խ, հա՛յ մայրեր, կը մտածեմ, այս ի՛նչ օրերու ինկեր են ձեզմէ շատեր, այս ի՛նչ զաւկի տեր դարձեր էք դուք, որ ձեր «պոյով-պուսաթով» տղաներէն ոմանք Երեւանի կեդրոնը ծխելով ման պիտի գան, անցնող գացող հայ աղջիկներուն ետեւէն յաճախ խենեշաբար նայելով ու խօսքեր նետելով ժամանակ սպաննեն, մինչ անդին եւ ասդին տակաւին իրենց մէջ քիչ մը ուժ ունեցող երիտասարդ մայրեր, երբեմն ալ քոյրեր, «փող պիտի հասցնեն» իրենց զաւակներուն, անգործ ու ամէն գործ քիթին չդնող ամուսիններուն ու տղաներուն՝ մինչեւ իսկ Թուրքիոյ այս օդակայանին լուացարանները լուալով...

Ո՛չ, շատ անխիղճ խորհրդածութիւններ են ասոնք, որքան ալ տեսածս ու լսածս արեւու լոյսին պէս յստակ է: Ո՛չ, պէտք չէ հասկցնեմ հայ ըլլալս որ խեղճ կինը, որուն տարիքին արեւմուտքի կանայք կը սկսին երկրորդ անգամ փայլիլ, զուգուիլ ու զարդարուիլ, գեղեցկութեան սրահներ յաճախել, ընկերուհիներով Լաս Վեկաս ու Միամի երթալ...

Ո՛չ, վայրկեան առաջ հեռանալ է պէտք այս կնոջ մօտէն, որովհետեւ իրենք զոհերն ու խաբուածներն են մեր երկրի իրարայաջորդ ապիկար վարչախումբերու: Հեռանա՛լ է պէտք մեկ վայրկեան առաջ, որովհետեւ ամէն հայ տղայ այս հեք կնոջ զաւկին նման չէ՛ - քանինե՛ր գիտեմ իմ շրջապատէս, որոնք սիրայօժար կերպով սահմանները կը պաշտպանեն ու զինձառայութեան կը մեկնին...

2021 թ.: Վերջերս լսեցիք թէ օդանաւային ընկերութիւններու առջեւ հերթի կեցեր են եղեր հայեր, որոնք «մի ըստե՛ք առաջ» կ'ուզեն հեռանալ այս «անիծեալ» երկրէն, այս «դժոխքէն», որ ի՛նչ, երթան եւ օտարին խոպան հողե՞րը մշակեն, «ցեմե՛նտ կրեն», մուք գործերո՞վ զբաղին, թաքսի կամ «Ուպեր» քշեն, օտարին զուգարաննե՞րը մաքրեն...

Պատրաստ եմ լսելու կշտամբանքներ այս խոհերս գրաւոր արտայայտած ըլլալուս համար.

- Շատ հայրենասէր ես, արի՛ մի քիչ էլ դու ապրի էստեղ, մենք քո տեղը...
- Տաքուկ տեղներդ նստել էք հայրենասիրութեան քարո՞զ էք կարդում...
- Կուշտը սովածի վիճակից չի հասկանայ...

Իրաւունք ունիս, սիրելի հայրենակից: Ես քեզ կշտամբելու չեմ ելած. Աստուած քեզի համբերութիւն տայ, մեր «ղեկավարութեան» շնորհք ու խիղճ, թուրքագերիին մա՛հ: Դեռ ոռւսին բան չեմ ըսեր, շուտով անոր ժամանակն ալ պիտի գայ:

Երկու խօսք.- Այս ակնարկի իսկական օրինակը դիտավորյալ կերպով հանել էի 2012-

ին լոյս տեսած իմ «Մորմորող անցյալի արահետներով» գրքից լոկ մի մտահոգությամբ՝ չլինի՞, թե այս փորձառության նկարագրությունը վիրավորի մեր՝ հայության արժանապատվությունը՝ որքան էլ պատահածը լիներ սրտաճմլիկ, իսկ գլխավոր կերպարը հերթական զոհը Հայաստանի ետ-անկախության շրջանի ընկերային-քաղաքական և ռազմական ահավոր կացության: Այսօր էլ շատ տարբեր չի վիճակը: Շարունակվում է ընկերային կյանքի քայքայումն ու հուսալքությունը, որ ոմանց առաջնորդում է հայրենալքության, մինչև իսկ ինքնասպանության փորձերի: Երկար մտածելուց, վերատեսության երթարկելուց և տարբեր ընկերների կարծիքներն առնելուց հետո որոշեցի հրատարակել: Բնավ երբեք միտք չունեմ այս օրերին կրկին թափ առած արտագաղթի երևոյթի **ամբողջ մեղքը** փաթաթել այսօրուա գլուխը կորցրած իշխանության վրա: Վերջին քսանհինգ տարիների մեր հաջորդական վարչակարգերը «մեծ ծառայություն» մատուցեցին արտագաղթի խորացման: Մյուս կողմից՝ ուզում եմ նաև մեր աշխատավոր, մտավորական, մասնագիտությանց տիրացած հայրենակիցների ուշադրության հանձնել գլխավոր կերպարիս փորձառությունը:

«...Եղան հայեր, որոնք իրենց մորթը փրկելու համար...լքեցին տուն, տեղ, երկինք...»,
Շահան Շահնուր, «Նահանջը առանց երգի»
«Ով որ ականջ ունի թող լսէ, ով որ աչք ունի թող տեսնէ», «Աստուածաշունչ»

Լինելով արևմտահայ ծագումով սիյուռքահայ, դիտավորյալ կերպով որոշեցի արտահայտվել 1960-70-ական թվականներին սովորած արևելահայերենով, որն ինձ համար նոյնքան հարազատ է եղել և է՝ որքան արևմտահայերենը: Միայն ներողամտություն եմ հայցում դասական ուղղագրության ջերմ պաշտպաններին, որ նախընտրել եմ հայաստանեան ուղղագրությունը՝ լայն զանգուածների աւելի մեծ թվով հայրենակիցների հասնելու մտադրությամբ միայն:

Նվաստության, վիրավորվածության ու ափսոսանքի պահեր շատ եմ ունեցել, ոմանք թաղվել են հիշողությանս անհատակ հորում, ոմանք աղավաղվել են: Կան նաև մի քանի դեպքեր, որոնք ամեն անգամ, երբ բարձրանում եմ սրտիս խորքերից ու հասնում ճաթելիք ուղեղիս, մի տարօրինակ դող է պատում ինձ և ճգնում եմ պատահական բանով զբաղվել, որպեսզի դրանք անթեղեմ ու շարունակեմ առօրյաս:

2012թ., հուլիս ամիս, Իսթամբուլի ասիական կողմի «Սաբիհա Գյոքչեն» օդանավակայանի սպասման սրահ: Մի խումբ ուխտավորներ զբոսաշրջիկի հանգամանքով ԱՄՆ-ից ու Կանադայից ելել ենք շրջագայության դեպի Պատմական Հայաստան և Կիլիկիա: Բոլորիս մտքերն ու հոգիները միացնողը մեր հողի կանչն է, կանչ, որը փոխանցված է եղել մեզ մեր տարաբախտ ծնողներից ու մեծ ծնողներից, Միջին Արևելքի մեր համեստ նախակրթարան և երկրորդական վարժարաններից, ակումբներից...

-Սաբիհա Գյոքչեն, օդաչու Սաբիհա, Թուրքական հանրապետության առաջին կին և հերոս օդաչուն, հանրապետության հիմնադիր, «Նախագահաց Նախագահ» Աթաթուրքի որդեգիրներից մեկը, որը երիտասարդ տարիքին իր կոչումը նկատեց երկինքը պեղելու և դեպի աստղերը թռչելու ձգտումը: Եվ հաջողվեց՝ կատարելով բազում քաղաքացիական և ռազմական թռիչքներ արևելյան Թուրքիայում (Արևմտյան Հայաստան) ապստամբություն բարձրացրած քուրդ և այլ ցեղերի դեմ: Ջարդեց, քանդեց և արժանացավ...Թուրքիայի Հանրապետության հերոսուհու կոչման:

Այդ օրը՝ հուլիսի 27-ին, մենք՝ մի խումբ հայեր, քաջ գիտեինք թե ով էր Սաբիհան: Նա հայ որբուհի էր, որի ծնողները «անհետացել էին», իսկ հարազատներից ոմանք ցեղասպանության արհավիրքների միջով անցնելով հասել էին Բեյրութ: Հետագայում համարյա թրքացած Սաբիհան հանդիպել էր իր հարազատներին, բայց չգիտենք, թե ինչպիսի զգացական պահ էր եղել դա: Այս մասին ոչինչ չգիտենք. Պատմությունը պահել է սակայն նրա հարազատների անունները...

Թրքացրել էին հայուհուն, որի նկարին եթե նայես, թուրքի ոչ մի հետք չես տեսնի: Իսկական հայուհի, որը թուրք ամուսին էր ունեցել և թուրք զավակներ պարգևել իր հարազատներին կոտորած ազգին:

Քանի՛ հազար այսպիսի հայուհիներ այսօրուան թուրք ազգին են տվել հերոսներ, գործիչներ, տնտեսագետներ, գիտնորականներ, գիտնականներ, որոնք հավանաբար չիմացան անգամ թե իրենց երակների միջից հոսում էր հայի արյուն, այն հայերի, որոնք ազգակիցները ջարդվեցին «Երանի՛ թուրք եմ ասողին» երդումով սնված թուրքերի կողմից...

Այսպես խորհրդածում էինք կես գիշերային խաղաղ օդականավակայանում, ավստսում ու մոկտում էինք և հարց էինք տալիս մենք իրար՝ հիմա մենք «սեփակա՞ն» հարկի տակ ենք գտնվում թե՞ մեր ջարդարարի որդեգիր դստեր: Մեզ մտում էր լռել: Խոսելու բան չունեինք: Ի՛նչ իմանայինք, որ գալիք օրերին որքա՞ն այսպիսի պատմություններ էինք լսելու և որքա՞ն մարդկանց էինք հանդիպելու, որոնք խաչակնքելով պիտի մոտենային ու փսփսուքով հայտնեին.

- Իմ մայրն էլ էր հայ:

- Իմ մեծ մայրն էլ հայ էր, անունը Ովսան, Սառա, Խաթուն...

- Չե՞ք հավատում, ահա՛. «Հայր մեր, որ հերկիսս ես...», *մեզ մայրիկես լսեր իմ* (մեծ մայրիկից եմ լսել)...

Իսթամբուլ-Անտիոք թռիչքը փախցրել էինք մեզանից անկախ պատճառներով, հետևաբար մինչև առավոտ պետք է սլքտայինք «Սաբիհայի հարկի տակ»: Ավստսում էինք, որ կես օր իզուր էինք անցկացնելու, որի պատճառով ստիպված էինք լինելու մի ամբողջ ցերեկ Մուսա լեռան Վազֆ գիւղը անցկացնելու փոխարեն երեք-չորս ժամով

Բավարարվել...

Տաղտկալի են դատարկ սրահները, գրեթե բոլոր ժամանցի կենտրոնները փակ են բացի մեկից, ուր երկու թրքուհիներ աշխատում էին հորանջելով: Դիմում ենք աշխարհի բոլոր օդանավակայաններում սովորական երևույթ դարձած...նստարանների վրա կամ հատակին քնելու միջոցին և ստեպ ստեպ գուգարան այցելելու:

Լուսադեմի ժամը երկուսի մոտ էր, երբ բնական պահանջք եմ զգում «մի տեղ» այցելելու: «Ուրքս կոտրեր թատրոն չերթայի՛» պիտի ասեր անմահ երգիծաբան Հ. Պարոնյանի Պաղտասար աղբարը:

«Գործի» ավարտին լվացվում եմ ծուկորեն և հանկարծ ականջիս է հասնում արևելահայերեն հեռախոսային պաղատագին մի խոսակցություն: «Հայաստանի պետք է լինի» մտածում եմ և վստահ լինելու համար, թե հոգևորական պատճառով տեսիլք չէ եղածը, առաջանում եմ ձայնի ուղղությամբ: Քառասունների մեջ գտնվող և հավաքարարի շորերով մի կին է բջջայինով խոսողը: Չուգարանի դռան մուտքին, թիկունքը պատին հենած խոսում է հարազատի հետ, որի ով լինելը պարզվում է շուտով՝ Երևանից իր քսանամյա որդին էր: Համենում եմ, ներս ու դուրս եմ անում և ականջալուր հետևում մի ողջ ողբերգության, որի տարբերակներին հանդիպեցի մի քանի անգամ Իսթամբուլում:

-Ա՛լ բալես, լսի՛, լսի ինչ եմ ասում...լսի՛, մի՛ խօսա...մերդ ա խօսում...Ինչի՞ ես շտապում տղա ջան...լսի ի՛նչ եմ ասում...հա՛, հա՛, հասկանում եմ, բալես, եսքան սպասել ես մի քիչ էլ սպասի...ՉԷ՛, չէ...ի՛նչ ես ասում, ցա՛ւդ տանեմ, մատաղ ըլնեմ, մի քիչ փող եմ հավաքել, առջևում երկու շաբաթ արձակուրդ են խոստացել, կը գամ ու քեռուդ հետ կը գնանք կ'առնենք էդ «բիյեմվե» ես ասում, ինչ ես ասում...

Պաղ քրտինք է պատում ինձ, հետո մի խեղդող տաքություն կոկորդիցս դուրս գալով ինձ դուրս զգում լուացարանից և շարտում ամենամոտիկ նստարանին: Մեծ ճիգ եմ թափում չմատնվելու:

Շարունակում է հեք կինը.

- Լսի՛ բալես, տես ինչ եմ ասում...հա՛, հա՛, նշանի մատանին էլ կը բերեմ...ի՛նչ, ի՛նչ ես ասում հըմի պետք չի՞, պա ե՞րբ է պետք...ո՞նց կ'ըլնի...

Ու այս ամբողջ խոսակցությունից պարզվում է որ Երևանի տղան չի աշխատում, հարմար գործ չի ճարում, ծանոթ եթե չունենա գործ չեն տալիս և նման սովորական պատճառաբանություններ:

Մի պահ փորձվում եմ բացահայտել ինքս ինձ և խնդրել, որ այստեղ հայերեն իմացողներ կան, թող չլսեն իր պատմությունը և ես վիճակի մեջ գտնվելը, որ ինք՝ մի հայուհի, Սաբիհա Գյոքչեն օդանավակայանում աշխատում է որպես ...

Ետ եմ կանգնում մտադրությունիցս: Կինը շարունակում է համոզել որդուն, թե էդ «ավտոն» (BMW) թանկանոց մեքենա է, գուցեն «խփնուած ու դգած-փչած ավտո է, թե ավելի լավ է Սուզուքի կամ Մագդա գնի...: Անօգուտ: Երևանի մեջ պարապ-սարապ, մամայի ճակտի քրտինքով աշխատած գումարները գրպանը դրած «թասիբով» հայ երիտասարդը, որովհետև տղա՛ է և արժանապատվություն՛ն ունի «աղբեր տղերքի» մոտ՝ «ստից-մտից» գործ չի ուզում անել: Սրճարանից սրճարան, մի փիծծայատնից մյուսը պետք է գնա, մի գարեջրատնից մյուսը մտնի ելնի , *մարլբորո* պետք է ծխի, որ երևա, թե ի՛նչ շրջապատ ունի ինք...

Ա՛խ, հա՛յ մայրեր, կը մտածեմ, այս ի՛նչ օրերի մեջ եք ընկել դուք, այս ի՛նչ զավակներ են դարձել ոմանք, որոնք իրենց «բոյ-բուսաթը» ցույց տալով ման են գալիս Երևանի կեդրոնը՝ ծխելով ու անցնող գնացող հայ աղջիկների հետևից հաճախ նայելով խենեշորեն ու խոսքեր գցելով, մինչ հեռավոր ափերում տակավին իրենց մեջ մի քիչ ուժ ունեցող երիտասարդ մայրեր, երբեմն էլ քույրեր, «փող պետք է հասցնեն» իրենց զաւակներին, անգործ ու ամեն գործ քթին չդնող ամուսիններին ու տղաներին՝ մինչև իսկ լվալով Թուրքիայի հենց այս օդանավակայանի զուգարանները...

Ո՛չ, շատ անխիղճ խորհրդածություններ են սրանք: Ո՛չ, պետք չի իմացնել հայ լինելս, որ խեղճ կինը, ում տարիքին արևմուտքի կանայք սկսում են երկրորդ անգամ փայլել, զուգվել-գարդարվել, գեղեցկության սրահներ հաճախել, ընկերուհիներով Լաս Վեգաս ու Մայամի գնալ...

Ո՛չ, վայրկյան առաջ հեռանալ է պետք այս կնոջից, որովհետև նրանք զոհերն են ու խաբվածները մեր երկրի իրարահաջորդ ապիկար վարչախմբերի: Հեռանալ է պետք մի վայրկյան առաջ, որովհետև ամեն հայ տղա այս հեք կնոջ որդու նման չի՝ - քանինե՛ր գիտեմ իմ շրջապատից, որոնք սիրահոժար կերպով սահմաններն են պաշտպանում ու զինծառայության են մեկնում...

2021 թ.: Վերջերս կարդացի, թե օդանավային ընկերությունների առջև հերթի են կանգնել եւ իբր «իրար են ջարդում» ՀՀ-ից մեկնելու համար: Հայեր են, որոնք «մի ընկալ առաջ» ոգում են հեռանալ «Ես անիծյալ երկրից, Ես դժոխքից», որ ի՛նչ, գնան և «օտարի խոպան հողե՛րը մշակեն, ցեմե՛նտ կրեն, մուժ գործերո՞վ» զբաղվեն, տաքսի կամ «Ուբե՛ր» քշեն UBER), օտարի զուգարաննե՛րը մաքրեն...

Պատրաստ եմ լսելու կշտամբանքներ խոհերս գրավոր արտահայտելուս համար:

- Շատ հայրենասեր ես, արի՛ մի քիչ էլ դու ապրի Էստեղ, մենք քո տեղը...
- Տաքուկ տեղերում նստել էք հայրենասիրության քարո՞զ էք կարդում...
- Կուշտը սովածի վիճակից չի հասկանա...

Իրավունք ունեք, սիրելի հայրենակիցներ: Ես ձեզ կշտամբելու միտք չունեմ: Աստված
ձեզի համբերություն տայ, մեր «ղեկավարության» շնորհք ու խիղճ, թուրքազերիին մա՛հ:
Դեռ ոռւսի երեսին բան չեմ ասում, մի քիչ էլ եմ համբերում, բայց ինչ որ բան ասելու
ժամանակն էլ կգա շուտով:

There are no comments yet.